МИНИСТЕРСТВО ЭНЕРГЕТИКИ И ПРИРОДНЫХ РЕСУРСОВ РА
ЗАО
“ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ”

0084, Армения, Ереван, ул.Зор. Андраника 1
Тел: 72 00 10 Факс: 72 01 21

MINISTRY OF ENERGY AND NATURAL RESOURCES OF THE RoA
CJSC
“HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS”

Zor. Andranikst. 1, Yerevan, Armenia, 0084
Tel: 72 00 10. Fax: 72 0121
E-mail: hvenbec@gmail.com

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ»ՓԲԸ
0084 Հայաստան,Երևան,Զոր. Անդրանիկի 1,
Հեռ. 72 00 10,Ֆաքս. 72 01 21

N 13-01/275

“26“ 03 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-326» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-326» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացացներ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ՝ ավտոպահեստամասեր:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Անդրանիկի 1 հասցեով մինչև 2014թ. ապրիլի 7-ը, ժամը 12:00-ին: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ռոմեն Ալբերտյանը : Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի Անդրանիկի 1 հասցեում, 2014 թ. ապրիլի 7-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերումը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոպահեստամասերի մատակարարման (որոնք կազմված են 6 չափաբաժիններց) տեխնիկական բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1), (ներկայացվում են ձեռք բերվող ապրանքի ընդհանուր գնով՝ ըստ չափաբաժինների): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6-326» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hvenbec@gmail.com:

Եթե Հրամանով հաստատված ցանկում ներառված գնման գործընթացի մասով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին, ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

**Գլխավոր տնօրեն** **Ս. Աբրահամյան**

Կատարող՝ Ռ. Ալբերտյան
Հեռ. 74-59-10